ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 18

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Ք. Երևան

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և Էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նիստը (այսուհետ՝ նիստ) կայացավ 2022թ. մարտի 18-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

Նիստին մասնակցում էին՝

Կոմիտեի անդամներ

Կարեն Հովհաննիսյան Կոմիտեի նախագահ

Տիգրան Իսրաելյան

Բաբկեն Ղալոյան

Արման Ալաբերքյան

Հայկուհի Ռշտունի

Կոմիտեի նիստին մասնակցում են Կոմիտեի անդամներից 5-ը, հետևաբար, ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (այսուհետ՝ Կանոնակարգ) 7-րդ հոդվածի 7.01 կետի համաձայն Կոմիտեն իրավազոր է:

Նիստն արձանագրում է Կոմիտեի անդամ, քարտուղար Հ. Ռշտունին:

Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը:

Կոմիտեն, ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 2-րդ հոդվածի 2.01 կետով 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածի 4.01, 4.02 կետերով, 5-րդ հոդվածի 5.01 կետով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածի 21.04 կետով, 28-րդ հոդվածի 28.01 կետով, օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ կայացրեց հետևյալ որոշումները.

1. **08/03/22թ. «Ուրարտու-2» - «Գանձասար ՖԱ» (ԱԽ069) խաղի մասին.**
   1) «Ուրարտու-2» թիմի ֆուտբոլիստ Արման Փիլոյանի (N 21152) կողմից ոչ սպորտային վարքագիծ խաղը սպասարկող անձնակազմի նկատմամբ, որի համար հեռացվել է խաղադաշտից:
   2) Այդ միջադեպից հետո՝ խաղի 58-րդ րոպեին «Ուրարտու» ՖԱ սեփականատեր Ջևան Չելոյանցը պատվավոր հյուրերի օթյակից հրահանգել է «Ուրարտու-2» թիմի մարզչական անձնակազմին հանել թիմը խաղադաշտից, որի հետևանքով խաղը դադարել է:
   3) «Ուրարտու» ՖԱ սեփականատեր Ջևան Չելոյանցի կողմից ոչ սպորտային վարքագիծ խաղը սպասարկող անձնակազմի անդամի նկատմամբ:

Կոմիտեն քննարկումների արդյունքում որոշեց՝

1) Հաստատված համարել «Ուրարտու-2» թիմի ֆուտբոլիստ Արման Փիլոյանի (N 21152) կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 37-րդ կետով՝ «Ուրարտու-2» թիմի ֆուտբոլիստ Արման Փիլոյանին (N 21152) որակազրկել մինչև 2022 թվականի ապրիլի 10-ը ներառյալ և «Ուրարտու» ֆուտբոլային ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի՝ 100.000 ՀՀ դրամի չափով:

2) Ղեկավարվելով ՀՖՖ կարգապահական կանոնակարգի 40-րդ հոդվածի 12-րդ կետով՝ «Ուրարտու-2» թիմին գրանցել 0:3 հաշվով տեխնիկական պարտություն և «Ուրարտու» ֆուտբոլային ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի մեկհազարապատիկի՝ 1.000.000 ՀՀ դրամի չափով:

3) Հաստատված համարել «Ուրարտու» ֆուտբոլային ակումբի սեփականատեր Ջևան Չելոյանցի կողմից կարգապահական խախտում թույլ տալը և ղեկավարվելով ՀՖՖ Կանոնակարգի 40-րդ հոդվածի 35-րդ կետով՝ «Ուրարտու» ֆուտբոլային ակումբի սեփականատեր Ջևան Չելոյանցի նկատմամբ որպես պատասխանատվության միջոց կիրառել «նկատողություն» և Ուրարտու» ֆուտբոլային ակումբին տուգանել նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի՝ 500.000 ՀՀ դրամի չափով: